

## **Ղազախստանի Հանրապետության Ազգային ակադեմիական գրադարանի պատվիրակությունը Հայաստանի ազգային գրադարանում**

Մարտի 30-ին Հայաստանի ազգային գրադարանում էր Ղազախստանի Հանրապետության Ազգային ակադեմիական գրադարանի պատվիրակությունը՝ տնօրեն Ումուտկան Մունալբանայի գլխավորությամբ:

2016թ. նոյեմբերի 30-ին Ղազախստանի Հանրապետության Ազգային ակադեմիական գրադարանի և Հայաստանի ազգային գրադարանի միջև կնքվել էր փոխհամագործակցության հուշագիր և Հայաստանի ազգային գրադարանում բացվել էր Ղազախական գրականության կենտրոն:

Պատվիրակությունը այցելեց Հայաստանի ազգային գրադարանի Անձեռնմխելի գրականության բաժին՝ ծանոթանալով հնատիպ գրականության նմուշներին: Այցելեցին նաև Ղազախական գրականության կենտրոն՝ համալրելով այն ղազախերեն նոր գրականությամբ: